

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ցանկ

ԿԱՐՍԻՐ ԳԱՐՈՒՆ

ԸՆԿԵՐ

ՀՈԿՏԵՄԲԵՐԻԿՆԵՐԻ ԵՐԹԸ

ՄԱՅԻՍ

ՄԵՂՈՒ

ԳԱՐՈՒՆ

ԱՌԱՎՈՏԸ

ԼՈՒՍԱԴԵՄԻՆ

ԾԱՂԿԱՆՑ ԾՈՎԸ

ԾԻԾԵՌՆԱԿԻՆ

ՔԱՄԻ

ԲԿԼԻԿ-ՁԿՆԻԿ

ԼՈՒՍԻՆ

ԳԻՇԵՐ

ԳԱՐՈՒՆ

ԾԻԱԾԱՆ

ՁՈՒԿԸ

ԱՅԳԻ

ՉՈՐՍ ԵՂԱՆԱԿ

ԱՇՆԱՆ ԴԵՍ

ԵՂԵՎՆԻ

ԱՆՏԵՐԵՎ ԾԱՌ

ՁՄԵՌ

ՁՄԵՌ ՊԱՊԻ

ՆԿԱՐԻՉ

ՓՆՋԼԻԿ ԿՈՎՍ

ՓԻՄԻԿ

ԼՈՐԻԿ

ՃՈՒՏԻԿԸ

ՍԱԳԻԿ

ՄԱՍՏԱՆԸ

ԲԶԵԶ

ՄԻ ԷԾ ՈՒՆԵՍ

ԳԻՐՔ

ՀՅՈՒՍՆԵՐԸ

ՔՈՒՅՐ ՈՒ ԵՂԲԱՅՐ

## ԿԱՐՄԻՐ ԳԱՐՈՒՆ

Գարուն եկավ,  
Կարմիր գարուն,  
Մեծ գետ դարձավ  
Փոքրիկ առուն,  
Էլ չթողեց  
Ճամփին ճահիճ,  
Քշեց տարավ օձ ու կարիճ:  
Դու չես տեսել էսպես գարուն,  
Էլ չես թափի կարմիր արուն.

Էլ չես տեսնի սրտի մրմուռ,  
Էլ չես չափի արցունք բուռ-բուռ.  
Էլ չի ուտի օձը ձագիդ,  
Ու չի խոցվի սիրտդ ու հոգիդ.  
Կարմիր կակաչ սարի լանջին,  
Կարմիր մորի թփի միջին,  
Էսպես եկավ կարմիր գարուն.  
Մեծ գետ դարձավ փոքրիկ առուն:

## ԸՆԿԵՐ

Լուսացավ, ընկե՛ր,  
Ե՛կ աշխատենք, ե՛կ,  
Աշխատանք կուզի  
Աշխարհը նորեկ:

Աշխատանք ձեռքի,  
Աշխատանք մտքի,  
Աշխատանք կուզի  
Գիշեր ու ցերեկ:

Աշխատանքը մեր  
Չի կորչի անհետ,  
Անմահ կմնա  
Վեհ մտքերի հետ:

Օգուտ տանք երկրին,  
Օգուտ, ի՛մ ընկեր,

Ցանենք աշխարհում  
Միշտ ազնիվ սերմեր:

### **ՀՈԿՏԵՄԲԵՐԻ ԿՆԵՐԻ ԵՐԹԸ**

Զորակի միջով,  
Ոտի տակ կանաչ,  
Հոկտեմբերիկներ  
Գնում են առաջ:

Արևի լույսը  
Լցվել է ձորակ,  
Ֆռռում է քամուց  
Կարմիր դրոշակ:

Վաղ են վերկացել,  
Ընկել են ճամփա.  
Թմբկահար, զա՛րկ, զա՛րկ,  
Թմբուկդ թմբա:

Երգ, խաղ ու մարզանք  
Սփռելով ճամփին,  
Հյուր եկան նրանք  
Պիոներներին:

### **ՄԱՅԻՍ**

Գարնան ամիս  
Միրուն մայիս,  
Նախշ ու նկար,  
Բարով եկար:

Եկար, բերիք  
Վարդը կարմիր,  
Մուսան-ամբուլ,  
Միրուն բլբուլ:

### **ՄԵՂՈՒ**

Պրզզան, պրզզան,  
Պրզպրզան,  
Պստիկ մեղու տրզտրզան,  
Դաշտ ու հովիտ կշրջես,  
Բարձր սարեր կթռչես,

Սուսան սմբուլ կծծես  
Ու ոտքերով թավամագ  
Փոշի առած տուն կգաս:

## **ԳԱՐՈՒՆ**

Ձմեռն անցավ...  
Եկավ գարուն...  
Ձյունը հալվեց,  
Լցվեց առուն:

Արև ծագեց  
Արևելքից,  
Ծիլեր քաշեց  
Գետնի տակից:

Տաք հարավից  
Եկան հավքեր,  
Բույն հյուսեցին  
Ընկեր-ընկեր:

Ծառը պտկեց,  
Տվեց բողբոջ,  
Աղբյուրն հանեց  
Անուշ խոխոջ:

Փռվեց կակաչ  
Սարի լանջին,  
Կարմրեց մորին  
Թփի միջին:

Դաշտը թավիշ  
Զգեստ հագավ,  
Կանգնեց քարին  
Երգեց կաքավ:

Արոտ գնաց  
Ծնած մաքին,  
Կաթը տվեց  
Անուշ ձագին:

## **ԱՌՍՎՈՏԸ**

Լույսը լույսով շողշողաց,  
Երգը հնչեց սոխակի,  
Շողը շողով դողդողաց,  
Շուտով արև կծագի:

Արշալույսի ցուքերը  
Շապիկ հագան ծիրանի,  
Տեսան, թռան հավքերը,  
Նրանց հագա՜ր երանի:

Դաշտի քնքուշ ծաղիկը  
Բացեց թերթեր բուրավետ,  
Եվ վաղորդյան շաղիկը  
Երկինք թռավ շողի հետ:

Ու բարձրացավ թանձր մեզ  
Գետի փրփուր ջրերից,  
Ջրին ասավ մի եղեգ.  
— Տե՛ս, լո՛ւյս ծագեց վերևից:

## ԼՈՒՍԱԴԵՄԻՆ

Անուշ հովերն են փչում,  
Ոսկի հասկերն են ծփում,  
Մանր ուլունք շաղ տալով՝  
Բարակ առուն կարկաչում:

Առվի կանաչ ափերին  
Գառն ու ուլն են արածում,  
Ծաղիկները թփերին  
Անուշ բուրմունք տարածում:

Արշալույսը ոսկեգոծ  
Ծագեց հեովից շողալով,  
Խոփը մտավ հողի ծոց,  
Ակոս շարեց սողալով:

## ԾԱՂԿԱՆՑ ԾՈՎԸ

Ծաղկունքն ամեն մեկ-մեկ բուսան  
Հարյուր-հազար գույն-գույն ներկած,  
Լեռ ու հովիտ ծաղիկ դարձան,  
Ծաղկանց ծովը ծըփ-ծըփծըփաց:

Մանուշակը կապույտ գլխով  
Թաք է կացել թփերի տակ,  
Զանգակիկը մեղմ ճոճալով  
Թերն է ներկել կապույտ-սպիտակ:

Ատամնավոր պսակ գլխին  
Կարմրել է ցից մեխակը,  
Իր բյուրավոր աչքը դեղին՝  
Հոտ է բուրում բարձմենակը:

Սիպտակ հագած հեզ շուշանը  
Փսփսում է զեփյուռի հետ,  
Թերը փռած մարգարիտը  
Օրորվում է առաջ ու ետ:

Կարմիր մախմուր, կուրծքը սևիկ,  
Մեն-մենակ է ալ-կակաչը,  
Սիպտակ փրփուր, լայնաթևիկ  
Բոժոժ էլ կա ծաղկանց մեջը:

Զարմանազան, էն զանազան  
Ծաղիկը իր վիզն է թեքել,  
Շարշարուրիկ շարան, շարան  
Ոտից գլուխ դեղին հագել:

Գյուլիսապահ մի ծաղիկ կա,  
Որ չի բացվում օր ցերեկով,  
Նա կբացվի ու հոտ կտա  
Արևից ետ, մութ գիշերով:

Քաֆուր-վարդի գովքը մնաց,  
Քնքուշ վարդի, կարմիր վարդի,  
Փշերով է շրջապատված,  
Փուշը սուր-սուր քաֆուր-վարդի:

Մի անթառամ ծաղիկ էլ կա  
Ծաղիկների ծաղիկն է նա,  
Նորի նման հինն անթառամ,  
Ամառ, ձմեռ չի չորանա:

Սուսան, քրքում ու բալասան  
Ոսկե պսակ սարի լանջին,

Ամեն ծաղիկ իր հոտն ունի,  
Բույր ու բուրմունք դաշտի միջին:

### **ԾԻԾԵՆՆԱԿԻՆ**

Դու կապուտակ ծովով արի,  
Թեթև, թեթև թևով արի.  
Ծովի փրփուր լանջով արի,  
Գարնան երգով, կանչով արի

Արի', արի' , սիրուն ծիծեռ,  
Արի, արի, գարուն դու բեր:

Սևիկ-մևիկ աչիկ ունես,  
Մկրատաձև պոչիկ ունես,  
Ծովի փրփուր լանջով արի,  
Գարնան շնչով, կանչով արի:

Արի', արի' , սիրուս ծիծեռ,  
Արի, արի, գարուն դու բեր:

Ծիծեռնակով գարուն կգա,  
Անծիծեռնակ գարուն չկա,  
Ծովի փրփուր լանջով արի,  
Գարնան շնչով, կանչով արի:

Արի', արի', սիրուն ծիծեռ,  
Արի', արի', գարուն դու բեր:

### **ՔԱՄԻ**

Քամի, քամի, դու ահեղ,  
Էն երկնքի ամպերը  
Հալածում ես ամեն տեղ,  
Ալեկոծում ծովերը  
Ու տարածում սար ու ձոր  
Քո անուշիկ հովերը:

### **ԲԿԼԻԿ-ՉԿՆԻԿ**

Ձկնիկ, լո'ղ տուր, լո'ղ արա,  
Դրսի որսը թող արա.  
Իջի'ր ջրի հատակը,  
Մինչև անցնի վտանգը:

Տե՛ս, փորձանք կա քո գլխին,  
Մի լավ մտիկ երեխին.  
Որդ է խփել իր կարթին  
Չմոտենաս եղ որդին:

Ինձ չլսեց շեկլիկը,  
Ինձ չլսեց բկլիկը,  
Հո՛ւյ, կուլ տվեց նա որդը,  
Կարթը մնաց կոկորդը:

## **ԼՈՒՍԻՆ**

Լուսին, լուսին,  
Լուսերես,  
Ինչքան, ինչքան  
Կլոր ես:

Լույս ես տալիս  
Գիշերով,  
Քո վառվռուն  
Թշերով:

## **ԳԻՇԵՐ**

Իջնում է գիշեր  
Սարերի ուսին,  
Փայլում է վերից  
Կաթնագույն լուսին:

Վերից նայում է  
Երկինքը ուրախ,  
Քնած է գյուղը  
Անհոգ ու խաղաղ:

## **ԳԱՐՈՒՆ**

Զուգված, զարդարված  
Թավիշ կանաչով,  
Ցուլում է դաշտը  
Ոսկե ճաճանչով:

Միրուն մայիսը  
Գոհար է մաղել,



Ծաղկանց թերթերը  
Շողել ու շաղել:

Հագար տեսակի  
Թռչուն է երգում.  
Ալ-կանաչ դաշտը  
Զընգում, զրընգում:

## **ԾԻԱԾԱՆ**

Մթին ամպերից  
Եկավ հորդ անձրև,  
Պարզեց երկինքը,  
Ծագեց ջինջ արև:  
Կանաչ ու կարմիր  
Կապեց ծիածան,  
Զրի կաթիլներն  
Ալ — գոհար դարձան:  
Քամին հանդարտեց,  
Էլ չկա փոշի.  
Հողը տաքացավ,  
Ծխեց գոլորշի:

## **ԶՈՒԿԸ**

Զուկն է լողում  
Վճիտ ջրում,  
Վճիտ ջրում լճակի,  
Վառ արևի շողերի տակ  
Ցուլք է տալիս արծաթի:  
Հա՛ սուրում է,  
Հա՛ սուզվում է  
Բյուրեղ ծոցը լճակի,  
Բյուր նազանքով  
Մեղմ փարվում է  
Պուտ-պուտ թևին կոհակի:

## **ԱՅԳԻ**

Կանաչիք, կանաչիք,  
Իմ սիրուն այգի,  
Կանաչ ու կարմիր  
Նոր շորեր հագի:

Գարուն ու հավքեր  
Եկան քեզ համար,  
Կանաչիր, այգի՛,  
Անշուք մի՛ մնար:

Կանաչն ու կարմիր  
Նշան են կյանքի.  
Գարունդ է եկել,  
Կանաչիր, այգի՛:

## ՉՈՐՍ ԵՂԱՆԱԿ

Թե գարուն է նախշ-նախշուն,  
Նա ինչե՞ր է մեզ բաշխում.  
— Ծիլ ու ծաղիկ, կանաչ խոտ,  
Ալ ու ալվան վարդ շաղոտ:

Թե ամառ է, շոգ ամառ,  
Ի՞նչ է բերում մեզ համար.  
— Ցորեն, գարի ու հաճար՝  
Ամեն հոգսի դեղ ու ճար:

Թե աշուն է պտղաբեր,  
Ի՞նչ է բերում մեզ նվեր.  
— Նուռ, սերկևիլ, տանձ, խնձոր,  
Դեղձ ու խաղող մեղրածոր:

Թե ձմեռ է ցրտաշունչ,  
Ի՞նչ է թափում լուռումունջ.  
— Փաթիլ, փաթիլ փափուկ ձյուն՝  
Արծաթի պես պսպղուն:

## ԱՇՆԱՆ ԴԵՄ

Կապուտակ երկինք, լուսեղեն կամար,  
Ամպերը մալանչ ու ճերմակ մարմար...  
Հավքերը երամ՝ տարագիր, չըվող,  
Վերջին հրաժեշտի կարոտը երգող...  
Ոսկեհուռ շողեր, դողող հուրհուրան,  
Ոսկեթել ջրդարձ ջրերի վրան...  
Գետի կոհակներ մանրիկ օղերով,  
Ողողած, ցողած դալուկ շողերով...

Դաշտերը գունատ, հերկերը սև-սև,  
Եվ անտառն անխոս, ծառը անտերև...

### **ԵՂԵՎՆԻ**

Գունատ աշուն է...  
Էլ չկա թռչուն,  
Քամու թևերին  
Տերևն է թռչում:

Միայն եղևնին,  
Այնտեղ, խոր հովտում  
Կանաչ է հագել,  
Աշնան դեմ ժպտում:

### **ԱՆՏԵՐԵՎ ԾԱՌ**

Փչեց ցուրտ քամին,  
Եկավ մեզ, մշուշ.  
Թերթերը թափեց  
Ծաղիկը քնքուշ:

Անտերև ծառը  
Ճյուղերը ճոճեց.  
Աշնան քամու հետ  
Կանգնեց ու վիճեց.

— Հե՞ր տերևներս  
Մեկ-մեկ պոկեցիր  
Ու աչքիս առաջ  
Գետին ածեցիր:

### **ՁՄԵՌ**

Ծառը մերկացավ  
Զրկվեց տերևից,  
Ձյունի փաթիլներ  
Իջան վերևից:

Ձյուն ու ցուրտ եկան,  
Առու, գետ լռեց.  
Իր արծաթ գորգը  
Ձմեռը փռեց:

Չյունը ծնկահար  
Նստեց մեր ճամփին,  
Սիպտակ հյուսերը  
Կիտեց գետափին:

## **ՁՄԵՌ ՊԱՊԻ**

Արի՛, արի՛,  
Ձմեռ պապի,  
Սպիտակ հագի,  
Սպիտակ կապի:

Սարում, ձորում  
Սուլիք, երգիք,  
Հեքիաթ ասա  
Հետաքրքիր:

Դաշտ ու անտառ,  
Գետ ու գետակ,  
Այս ամենը  
Առ թևիդ տակ:

Գցիր կամուրջ,  
Փռիր կարպետ,  
Ա՛յ անուրագ,  
Անձեռ վարպետ:

## **ՆԿԱՐԻՉ**

Օ՛յ, օ՛յ, օ՛յ, բուք-բորան  
Եկավ ծածկեց պատուհան .  
Նկարիչ է, նկարիչ,  
Ո՛չ ձեռք ունի, ո՛չ գրիչ,  
Ո՛չ ներկ ունի և ո՛չ տուփ,  
Նկարում է ծառ ու թուփ .  
Ծաղկե նկար է անում,  
Ապակու վրա նկարում:

Ա՛յ, եղպես է բուք-բորան,  
Կուզե՞ս տեսնել դու նրան .  
Թե տղա ես, դուրս գնա,  
Քիթդ էնտեղ կըմնա:

## ՓՆՁԼԻԿ ԿՈՎՍ

Փջլիկ կովիս,  
Ծաղիկ կովիս  
Շատ եմ սիրում .  
Դաշտից՝ կանաչ,  
Աղբյուրից՝ ջուր  
Ես եմ բերում

Կե՛ր, Ծաղիկս,  
Կե՛ր, կովիկս,  
Կերդ անուշ,  
Խմիր, Ծաղիկ,  
Խմիր ջուրդ,  
Խումդ անուշ:

Կեր ու խմիր,  
Փը ուփը՝ ո կաթ տուր  
Կաթդ անուշ .  
Փը ուփը՝ ո կաթ տուր՝  
Սերն երեսին,  
Սերդ անուշ:

Փնջլիկ կովիս,  
Ծաղիկ կովիս  
Շատ եմ սիրում,  
Դաշտից՝ կանաչ,  
Աղբյուրից՝ ջուր  
Ես եմ բերում:

## ՓԻՍԻԿ

Փիսի՛կ, փիսի՛կ,  
Չալ պոչիկ,  
Վանա ճուտիկ  
Խուճուճիկ .  
Փիսի՛կ, փիսի՛կ,  
Շուտ արի,  
Մեր Լուսիկին օրորի:

Կտամ ես քեզ կովի կաթ,  
Կարմիր գինի, նռան հատ,  
Կապեմ վզիդ թաշկինակ,

Ու հազցնեմ տաք մուշտակ,  
Փիսի՛կ, փիսի՛կ, շուտ արի,  
Մեր Լուսիկին օրորի:

### ԼՈՐԻԿ

Առավոտուց փչեց հով,  
Արտը ծփաց դարձավ ծով.  
Արտի միջից թռավ լոր,  
Թռավ ընկավ սար ու ձոր,  
Կլորիկ, գլորիկ,  
Ա՛յ լորիկ,  
Օրոր-մորոր,  
Շորորիկ:  
Լորի՛կ, լորի՛կ, էս տարի  
Արտս արել եմ գարի.  
Ուր որ գնաս, շուտ արի,  
Արտիս միջին ծվարի:  
Կլորի՛կ, գլորի՛կ,  
Ա՛յ լորիկ,  
Օրոր-մորոր,  
Շորորիկ:

### ՃՈՒՏԻԿ

Կը՛տ, կը՛տ, կըտկըտան,  
Եկավ ճուտս ճըտճըտան,  
Հալածվել է ուրուրից,  
Բաժանվել է իր մորից,  
Ճըտճըտում է ու լալիս,  
Կորած մորն է ման գալիս:

### ՄԱԳԻԿ

Ղա՛ արիր, տվի,  
Ղո՛ւ արիր, տվի,  
Ա՛յ սիրուն սագիկ:

Գետումը լող տուր,  
Գետումը սող տուր,  
Ա՛յ կարմիր տոտիկ:

Գոնե իրիկուն

Կրկին արի տուն  
Շարմաղ ու կոկիկ:

## ՄԱՍՏԱՆԸ

Կըտի-կըտի Մաստանը,  
Կտիկ մտավ բոստանը,  
Ոտով մարգը տրորեց,  
Գլխով հողը փորփրեց,  
Ծուլի-ծուլի վեր ելավ,  
Իր պոչի հետ խաղ արավ:  
Բոստանչին էլ դուրս թռավ  
Չար այծիկին ձեռք առավ.  
Տվեց, տվեց, տուր տվեց,  
Ջանը վրեն քրքրեց,  
Քամուն տվեց մազերը,  
Տեղից հանեց պոզերը,  
Հանած պոզերի տեղը  
Լցրեց աղ ու տաքդեղը.  
Քոլիկ դարձավ Մաստանը  
Էլ չէր մտնում բոստանը:

## ԲԶԵԶ

Բը՛գ, բը՛գ, բըգբըգան,  
Բգեգն եկավ տրգտգան,  
Եկավ-ընկավ թակարդը,  
Նրան բոնեց չար սարդը:

## ՄԻ ԷԾ ՈՒՆԵՄ

Մի էծ ունեմ  
Հինգ վեց ուլով,  
Կաթը կըթեմ  
Կուժով, կուլով,  
Մածուն մերեմ  
Կճուճներով,  
Եղը հանեմ  
Լվի տկով,  
Բառնամ սելին  
Մեծ-մեծ ակով,  
Քաղաք տանեմ  
Յոթ լուծ մկով,

Հո՛, հո՛ անեմ  
Ուղտի պոչով,  
Ճամփեն երթա  
Կատվի քուչով:  
Թե չհասնի  
Էդտեղ վնաս,  
Քեռի Մինաս,  
Ինձ հյուր կըզաս:

### **ԳԻՐՔ**

Ասա տեսնեմ,  
Իմ սիրուն գիրք,  
Էս ինչե՞ր կան  
Ծոցիդ միջին.  
Ճատան մուկը,  
Ոսկի ձուկը,  
Թիթեռ, բզեզ  
Գույն-գույն, պես-պես.  
Բադն ու բուլիկ,  
Գառն ու ուլիկ,  
Կաքավ ու լոռ,  
Շլոռ, սալոռ:  
Ասա՛, պատմի՛ր  
Իմ ականջից,  
Շատ բան գիտես  
Ամեն ինչից:

Դե՛հ, շո՛ւտ պատմիր,  
Իմ խելոք գի՛րք,  
Մատաղ կանեմ  
Քեզ խաղ ու միրգ:

### **ՀՅՈՒՄՆԵՐԸ**

Տեսեք ամեն օր  
Արհեստանոցում  
Մեր հյուսներն ինչ ձայն,  
Աղմուկ են զգում:  
    Շա՛խկ-շո՛ւլիկ,  
    Շա՛խկ-շո՛ւլիկ,  
    Թա՛խկ-թո՛ւլիկ,  
    Թա՛խկ-թո՛ւլիկ:



Աշխատանքն եռում,  
Եփ է գալիս, եփ,  
Սողոցն է մաղում  
Տախտակներից թեփ:  
Քաշած տախտակից  
Հատակի վրան,  
Հյուսները շինում են  
Սեղան, նստարան:  
Ու գործից հետո,  
Արածով հպարտ,  
Երգում, պարում են  
Ուրախ ու զվարթ .  
    Շա՛խկ-շո՛ւխկ,  
    Շա՛խկ-շո՛ւխկ,  
    Թա՛խկ-թո՛ւխկ,  
    Թա՛խկ-թո՛ւխկ:

### **ՔՈՒՅՐ ՈՒ ԵՂԲԱՅՐ**

Սիրուն արև, դու իմ քույրն ես,  
Մեր մեջ չկա խորթ-մորի .  
Դու թել ունես, ասեղ ունես,  
Եկ ինձ համար շոր կարի:

Քո խնամքը տարածել ես  
Արար-աշխարհի վրա,  
Բայց մինուճար քո եղբորն ես  
Դու մոռացել աշկարա:

Գիշերները ես մրսում եմ,  
Քույրի՛կ, մերկ եմ, ամո՛թ է,  
Էլ ո՞վ ունեմ, որ բան ասեմ,  
Ո՞վ վ քեզանից ինձ մոտ է:

2

-Անուշ եղբայր, անուշ լուսին,  
Հոգիս դուրս գա քեզ համար,  
Դու կարծում ես, որ քո մասին  
Չե՞մ մտածում անդադար:

Ես կուզեի, որ քո բոյին

Շոր կարեի խշխշան,  
Որ դու երկնի վառ աստղերին  
Չերևայիր աննշան:

Ծիածանի վառ գույներից  
Ձևեի քեզ պատմուճան,  
Եվ ոսկեթել իմ մազերից  
Կարեի այն, եղբայր ջան:

Իմ շնորհքը և իմ սերը  
Ցույց տայի քեզ, իմ լուսին,  
Որ թե մարդիկ, թե աստղերը  
Հիանային միասին:

Բայց ի՞նչ անեմ, հասակ չունես,  
Բոյդ չափի տակ չի գալ,  
Մեկ տեսնում եմ դանկի մեջք ես  
Մեկ էլ տեսար՝ դարձար կալ:

Կերպարանքդ միշտ փոխում ես,  
Լրումդ առնում և նորում,  
Կեսդ կորցրած երևում ես  
Գիշերային խավարում:

Գնա՛ եղբայր, մի՛ ամաչիր,  
Մերկ են նույնպես աստղերը,  
Եվ ոչ ոքի մի՛ գանգատվիր,  
Որ շոր չարեց քո քույրը: